



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նշավան համայնք, հասցե, հեռախոս, էլ. Փոստ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» նոյեմբեր - ի 2012թվականի

№13-Ն

ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0011
ԾԱԾԿԱԳՐԻ 0.242 ՀԱ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ
ՀՈՂԱՏԵՍԸ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋԿՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ՝ ՀԱՆԳՍՏԻ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԱԿԱԾ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾՆՈՐՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ
ՓՈՆԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

գեկ. Մ.Ներսիսյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմելու
կարգը հաստատելու մասին» թիվ 1918 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ
կետի պահանջների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի
2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման
ժամանակավոր սխեմաների»:

Ավագանին որոշում է

Նշավանի գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման
ժամանակավոր սխեմայում համայնքային սեփականություն հանդիսացող 0011
ծածկագրի 0242հա գյուղ արտադրական օբյեկտների հողատեսքը փոխադրել
հատուկ պահպանվող հողերի կատեգորիա՝ հանգստի համար նախատեսված
հողերի գործառնական նշանակության դասին:

/ կից եզրակացությունը /

- | | | |
|------------------|--|------|
| Ավագանի | | կողմ |
| Ռ. Ավետիսյան | | կողմ |
| Ի. Թաթայան | | կողմ |
| Գ. Գրիգորյան | | կողմ |
| Ս. Կարապետյան | | կողմ |
| Հ. Հախվերդյան | | կողմ |
| Ա. Հարությունյան | | կողմ |
| Մ.Սարգսյան | | կողմ |

Նշավան համայնքի ղեկավար՝



12.09.2012թ.

ք. Երևան

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ, կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների դրական եզրակացությունները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն ՀՀ Արարատի մարզի Նշավան համայնքում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, ըստ որի նախատեսվում է Նշավանի գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համայնքային սեփականություն հանդիսացող 0011 ծածկագրի 0.242 հեկտար գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատեսքը փոխադրել հատուկ պահպանվող հողերի կատեգորիա՝ հանգստի համար նախատեսված հողերի գործառնական նշանակության դասին:

Հանձնաժողովի նախագահ՝ *[Signature]* Վ. Տերտերյան

անդամներ՝ *[Signature]* Ռ. Ալավերդյան

[Signature] Ս. Պապյան

[Signature] Ա. Սամուելյան

[Signature] Խ. Գալստյան

[Signature] Լ. Շահվերդյան

[Signature] Ս. Հարությունյան

[Signature] Յ. Բաշոյան

հանձնաժողովի քարտուղար՝ *[Signature]* Կ. Արտեմյան